ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ (1908 թ. հուլիս-օգոստոս)

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1908 թ. հուլիսի 10-ի երիտթուրքական հեղաշրջումը մեծ խանդավառություն առաջ բերեց Թուրքիայում: Կ. Պոլիս վերադարձան ինչպես թուրք, այնպես էլ հայ աքսորականները և փախստականները: Երվանդ Օտյանի բնորոշմամբ՝ «Սահմանադրության և ազատության առաջին արդյունքը եղավ գաղթականներու խումբ խումբ վերադարձը դեպի Պոլիս»[1]: Այնտեղ հավաքվեցին ու համախմբվեցին Ժնևի դրոշակակալները, Ամերիկայի Հին և Վերակազմյալ հնչակյանները, Մ. Չերազն ու Ա. Չոպանյանը, ռուսահայ մտավորականները և հեղափոխական քարոզիչները:

1908 թ. երիտթուրքական հանկարծակի հեղաշրջման բնույթն ու ծավալը և վերահաստատված Օսմանյան սահմանադրության էությունը վերջնականապես պարզված չէին: Սակայն Վանի ողջ ազգաբնակչությունը և, մասնավորապես, մտավորական ու գիտակից մասը, տենդոտ հետաքրքրասիրությամբ հետևելով Կ.Պոլսի թերթերին, տարբեր մեկնաբանություններ ու գուշակություններ էին կատարում ապագայի վերաբերյալ:

Այդուհանդերձ, 1908 թ. հեղաշրջումը արձագանք ունեցավ Վանում: Վասպուրականի հայությունը ցնծում էր Օսմանյան սահմանադրության հռչակման և «հայակեր» ու «արյունաներկ» սուլթան Համիդի գահընկեցության առիթով:

Վասպուրականցին հույս էր տածում և նույնիսկ համոզված էր, որ այլևս «թուրք անպատասխանատու բաշիբոզուկի, թալանչի քուրտի և պաշտոնական օրգանների ու պետական հիմնարկների կողմից որևէ շնական արարք-թալան, բռնագրավում, բռնի առևանգում և սպանության դեպք չպիտի՛ լիներ»[2]:

Այնքան մեծ է եղել հեղաշրջման հաղթանակի նշանակությունը Վանի հայության համար, որ ժամանակակիցներից մեկը նշում է. «Կը քալենք ու կը քալենք, կերգենք, և մեր սրտերը անհոգորեն կը ծծեն ազատ լեռանց ազատ օդը ... հիմա ազատ ենք, մեզ ազատ ենք զգում»[3]:

Հեղաշրջման լուրը տեղ է հասնում հաղթանակից մեկ շաբաթ անց, քանի որ Վանի հայատյաց կուսակալ Ալի Ռիզան կատարված իրադարձությունը և Կ. Պոլսից ստացված հեռագրերը գաղտնի էր պահել ժողովրդից: Սակայն շուտով նա հարկադրաբար ու ստիպված պաշտոնապես հայտարարում է երիտթուրքերի կատարած հեղաշրջման հաղթանակի լուրը և տոնել տալիս այն: Ի դեպ, Վանի հայ և թուրք զայրացած ու «եղբայրացած» ժողովուրդը 1908 թ. օգոս-

---

[1] *Ե. Օ տ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1962, էջ 457:*

[2] *Ս. Ս ա ր հ ա դ յ ա ն. Կյանքիս Հուշերից, Երևան, 2007, էջ 32:*

[3] *«Գործ» (Թիֆլիս), 19. IX. 1908:*

տոսի 23-ին պաշտոնանկ է անում սուլթանական կարգերի կողմը կանգնած ու զինվորականության անվստահությունը հարուցող Ալի Ռիզային և նրան վտարում երկրից[4]: Բայց կուսակալը հեռագրով իրեն փոխանորդ է նշանակում Բաշկալեի մութեսարիֆին, որին վռնդել էին Սարայից: Սակայն քաղաքը կառավարելու համար հայերից, թուրքերից և զինվորականներից ընտրվում է 7 հոգուց բաղկացած խորհուրդ[5], որին շուտով փոխարինում է Կարինի կուսակալության թարգման, հայազգի Միքայել Հեքիմյանը: Նախատեսվում էր, որ այսուհետև Վանի կուսակալության պաշտոնը տրվելու էր միայն հայերին[6]: Սակայն շուտով կառավարությունը Վանի նոր կուսակալ է նշանակում Մահմուդ փաշային, որը հաստատվում է կենտրոնական նոր կառավարության և զինվորական հրամանատարության կողմից[7]:

Երիտթուրքական հեղաշրջման առիթով Վանը երեք օր շարունակ լուսավորվեց, տները զարդարվեցին դրոշակներով և բոլոր թաղամասերում թարմթարմ ծաղիկներից կանգնեցվեցին հաղթակամարներ: Միաժամանակ, քաղաքում տարածվեցին թռուցիկներ, որոնցում նշվում էին դավաճանների, հետադիմականների և մատնիչների անունները: Վանի ռուսական փոխհյուպատոս Բ. Ա. Պրեոբրաժենսկու հաղորդմամբ՝ «Վանի բնակչությանը համակած խանդավառությունը ենթակա չէր նկարագրության»[8]:

Վանում թուրքական բանակը երդվեց հավատարիմ մնալ սահմանադրությանը: Երդման տեքստում նշվում էր, որ «զորքերը հավատարիմ կմնան սուլթանին այն դեպքում, եթե նա չհրաժարվի ժողովրդին խոստացած իրավունքների իրականացումից»[9]:

1908 թ. հուլիսի կեսից սկսած ինչպես կայսրության բոլոր գավառներում, այնպես էլ Վանում, հայերի և թուրքերի շրջանում սկիզբ առավ հանրահավաքների ու ժողովների մի ժամանակաշրջան, որը բացարձակ նորություն էր Վանի կյանքում, և որը առանձին մեծ ոգևորություն էր պատճառում տեղացիներին: Վահան Փափազյանի բնութագրմամբ՝ հայկական ներքին գավառներում տիրում էր «օսմանյան սահմանադրության մեղրալուսնի օրերը»[10]: «Գավառներու մեջ ևս,– ինչպես Վ. Փափազյանն է նկատում, – ամենեն հոռետեսներն իսկ, սահմանադրական ազատության այդ առաջին օրերուն, խանդավառ էին և հոգեպես կազդուրված, խռոված միտքերը հանգստացած, և ոչ հեռավոր օրերու ծանր մղձավանջը փարատած էր»[11]: Այդ ամենը գալիս էր մայրաքաղաքից, ուր իրար էին հաջորդում հայ և թուրք ժողովուրդների եղբայրացման հեղափոխական հանրահավաքները:

---

[4] Архив внешней политики Российской Империи (*այսուհետև՝* АВПРИ), ф. Посольство в Константинополе, д. 1595, л. 88.

[5] *«Արև» (Ալեքսանդրիա), 9. X. 1908:*

[6] *«Ասպարեզ» (Ֆրեզնո), 18. IX. 1908:*

[7] *Հ. Ե ր ա մ յ ա ն. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 92:*

[8] АВПРИ, ф. Посольство в Константинополе, д. 1595, л. 75, 88.

[9] *Նույն տեղում, թ. 75:*

[10] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն. Իմ Հուշերը, հատոր երկրորդ, Պեյրութ, 1952, էջ 12:*

[11] *Նույն տեղում:*

1908 թ. հեղաշրջումը իրական հաղթանակ էր Վանի հայության համար: Սկսված ցույցերին իրենց անվերապահ մասնակցությունն էին բերում ինչպես հայ և թուրք հասարակ ժողովուրդը, այնպես էլ օսմանյան կառավարության անդամները: «Գայլն ու գառը համբույրներ կը փոխանակեին և օձք ընդ աղավնիս իթթիհատ կը կնքեին: Եվ այս, բաբե՛, Բերդաքաղաքի և Այգեստանի միջև հայոց պատմական գերեզմանատան ընդարձակ գետնին վրա, զոր կառավարությունը հարթել տալով, հուրրիեթ մեյտանի պիտի անվաներ»,– նշում է Հ. Երամյանը[12]: Հ. Երամյանի մեկ այլ հավաստմամբ՝ «թուրք պաշտոնական մարմիններն ո՛չ մեկ միջոց զանց չէին ըներ իրենց համակրանքն շռայլելու դեպի հայերը, զորս այլևս սէվկիւլիւ վաթան ռաշյարը մրզ կ'անվանեին»[13]: Երիտթուրքերը հաճախակի էին աղաղակում «Կեցցեն մեր հայ հայ եղբայրները»[14]:

Հեղաշրջումից հետո բացվում են բանտերի դռները [15]: Երկիր վերադառնալու թույլտվություն են ստանում Վանի բոլոր հայ փախստականները: «Դաշնակցական շեֆերը,– ինչպես Հ. Երամյանն է նշում,– ինչպես և բանտեն այնինչ արձակված Արամ հաղթականորեն պետական պաշտոնատուններ ներկայացան և հավատարմություն երդվելով՝ հեղափոխական կամ իթթիհատական կառավարության լուայալ քաղաքացիներու կարգն անցան»[16]: Բանտից ազատ արձակվեցին անհիմն ձերբակալված Վանի քաղաքական ժողովի ատենապետ Նշան էֆ. Գալճյանը և Աղթամարի կաթողիկոսարանի գրագիր Հովսեփ Խլղաթյանը [17]: Արմենակ Եկարյանը, որ մինչև այդ գտնվում էր Ուրմի (Ռիզայի) քաղաքում, ընտանիքով վերադարձավ Վան[18]:

Նոր կառավարությունը հաջորդաբար օրինական հայտարարեց դաշնակցական, արմենական և հնչակյան կուսակցությունները: Ազատագրական շարժման բազմաթիվ գործիչներ արժանացան հայ և թուրք ազգաբնակչության մեծարմանը: Կազմվեցին նույնիսկ թուրք և հայ խառը՝ իթթիհատական կոմիտեներ՝ հանուն նոր կառավարության ամրապնդման ու հեղափոխական սկզբունքների քարոզչության:

Պայքար ծավալվեց նաև քուրդ և թուրք բանտարկյալների ազատ արձակման համար: Բերկրեցի մի գյուղացու վկայությամբ, «Արամ փաշեն ամեն օր հեռագիր կուտա վերը բանտարկյալ քրդերը և թուրքերը ազատելու համար, որովհետև անոնք մեր եղբայրներն են, կսէ Արամ փաշան»[19]:

Հայերի համար «ուխտատեղի» դարձավ Պողպատենց դարի մեծ զորանոցը, որտեղ Ջելալ փաշան (1908 թ. Վանի խուզարկության ընդհանուր ղեկավարը), գրեթե ամեն օր, ժամը 10-ից մինչև կես գիշեր, կազմակերպում էր խրախճանքներ, ընդունելություններ և անընդհատ զինվորական երաժշտություն էր հնչեցնում: Նա հարգանքով էր վերաբերվում հայերին ու մասնավորապես հալած-

---

[12] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 92-93:*
[13] *Նույն տեղում, էջ 94:*
[14] *Ե. Օ տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 457:*
[15] В. И. Ш п и л ь к о в а. Младотурецкая революция 1908–1909 гг. М., 1977, с. 124.
[16] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*
[17] *«Հորիզոն» (Թիֆլիս), 23. VIII. 1909:*
[18] *Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1947, էջ 153:*
[19] *«Գործ» (Թիֆլիս), 19. IX. 1908:*

ված մտավորականներին: «Քաղաք և գավառ կը խայտար ցնծության մեջ և ամեն օր գյուղերեն ու գավառներեն հայ երևելիներ ու քուրտ պետեր, հատուկ հրավերներով, կուգային հանդիսավոր երդում ընելու սահմանադրության վրա»[20]: «Օրը օրին խանդավառությունը կը ծավալեր քաղաքին մեջ և կը տարածվեր դեպի գավառները,– նշում է Արտակ Դարբինյանը:– Հայերուն և թուրքերուն շրթունքներուն վրա ամեն օր կը հեղհեղվեին ազատություն, եղբայրություն, հավասարություն և արդարություն բառերը: … Հանդեսներ, հայնթուրք խառն միթինկներ, ամեն տեղ: Կյանքը իրապես կը վերակենդանանար»[21]:

Ամեն օր քաղաք էին գալիս խառնիխուռն թափորներ, իսկ հրապարակներում կազմակերպվում էին ցնծագին պարեր: Համբարձում Երամյանի հավաստմամբ, «Անճառելի՛ և սրտառույչ կերպարանափոխություն: Իրոք Վանի մեջ ևս երեկվան տարտարոսը դրախտի փոխված էր կարծես: Երլտրզի հասցեին ինչ մեղադրանքներ և նոյնիսկ հայհոյանքներ թուրքերու բերնեն, և ի՛նչ - փառաբանություններ հայ ազգին դարավոր հավատարմության և անձնվիրության համար»[22]:

Մեծ խանդավառություն սկսվեց Վանում, երբ Բերդաքաղաքի զորքերը, անցնելով Սըխգայի պոդոտայով, շարժվեցին Այգեստանի զորանոցը՝ երդում տալու համար:

Վանի Քաղաքամեջի և Այգեստան թաղամասերի միջև տեղակայված գրեթե 1 քառ. կմ տարածքով հայկական գերեզմանատունը թուրքերը վերածեցին «հուրրիեթ մեյտանիի» (ժողովրդական հրապարակի)՝ այնտեղ գումարելով հանրահավաքներ: Թուրք և հայ բանախոսները (Արամը, Հովսեփ Խլղաթյանը, Միհրան Թերլեմեզյանը, Արմենակ Մաքսապետյանը և ուրիշներ) ճառում էին օսմանյան հեղափոխության ծանոթ սկզբունքներից[23]: Այդ գերեզմանոցում էր, որ 1908 թ. հուլիսին Վանի Առաջնորդական և Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Եզնիկ վ. Ներկարարյանն ու Տեր Զավենը համբույրներով ողջագուրվեցին թուրք կրոնապետերի՝ մյուֆթիների հետ[24]: Այնտեղ էին գալիս նաև «Իթթիհատ վե թերաքի» կուսակցության աչքի ընկնող գործիչները:

Մեծ խանդավառությամբ և զինվորական երաժշտության ուղեկցությամբ քաղաքի հայ և թուրք ազգաբնակչությունը հյուրընկալ ձևով ընդունեց Սալոնիկից Վան ժամանած Էոմեր Նաջի բեյին ու գնդապետ Վեհիբ բեյին (1918 թ. Սարդարապատի հերոսամարտի Վեհիբ փաշան): Բանախոսելով անգլիական հյուպատոսարանի առջև՝ վերջինս թուրք ժողովրդին բացատրեց Անգլիայի ավանդական բարեկամությունը օսմանյան պետության նկատմամբ[25]:

---

[20] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*

[21] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. Հայ ազատագրական շարժումների օրերեն (հուշեր 1890-ից 1940), Փարիզ, 1947, էջ 177-178:*

[22] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:*

[23] *«Գործ», 25. X. 1908:*

[24] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 122:*

[25] *Նույն տեղում:*

1908 թ. օգոստոսի 10-ին էլ Իթթիհատի նախաձեռնությամբ Հայկավանի գերեզմանատանը տեղի ունեցավ միտինգ՝ կրետեական հարցի շուրջ[26]:

1908 թ. օգոստոսի 17/30-ին Արարքի՝ կանաչազարդ կամարներով, օսմանյան դրոշակներով և նահատակների պատկերներով շքեղապես զարդարված եկեղեցու մեջ կայացած ժամերգությունից հետո բոլոր կուսակցությունների համաձայնությամբ տեղի ունեցավ ազատության նահատակների հոգեհանգիստը: Արարողությանը հրավիրված էր նաև թուրք զինվորականությունը: Հոծ բազմությունը կառավարական նվագախմբի ուղեկցությամբ շարժվեց դեպի Արարքի եկեղեցու գերեզմանոց, որտեղ թաղված էր 1908 թ. Դավոյի դավաճանության զոհը դարձած արմենական Մեպուհը: Ապա բազմությունն ուղղություն վերցրեց դեպի Հանկույսների եկեղեցու գերեզմանատուն, ուր թաղված էր մեկ այլ արմենական՝ 1892 թ. կախաղան բարձրացված Մանուկ Շատվորյանը: Ելույթ ունեցողները փառաբանեցին 1890-ական թվականների նահատակների հիշատակը[27]: Զինվորական երաժշտության նվագակցությամբ ժողովուրդը՝ Արամի առաջնորդությամբ, այցելեց նաև Վասպուրականի մեծանուն հերոսներ՝ Տիգրան Տերոյանի և Ավետիս Թերլեմեզյանի տները: Ծաղիկներով զարդարվեցին նաև համիդյան բռնապետության դեմ մղած պայքարում զոհված մյուս նահատակների շիրիմները: «Անշուք ու անհայտ հողաբամբաններ կը խայտային կարծես և հերոս նահատակներ հարություն առած՝ անվերջ ու անծայր ոգևորության աղբյուր էին դարձած,– նշում է Թիֆլիսի «Գործ» պարբերականը և ավելացնում,– բոպեն շատ նվիրական ու խորհրդավոր էր, ամենքը կը գտնվեին պատմական մի հիշատակելի մոմենտի առջև, որի նմանը երբեք չէին ապրեր: Զինվորական մուզիկայով հարգանք տալ հրապարակորեն ու թափորով, պսակներով՝ ազատագրության անման զոհերին, անոնց ընտանիքին, դա երազ էր…»[28]:

Նահատակների հոգեհանգստից հետո Երամյան դպրոցի մեջ տեղի ունեցավ օսմանյան սահմանադրության տոնը և վարժարանի երեսնամյակի հանդեսը, որին հրավիրված էին նաև թուրք զինվորականության ներկայացուցիչները ու Վանի կուսակալ Ֆերիք փաշան: Սակայն հոգեհանգստի ընդհանուր ոգևորությունից և հեղափոխականաշունչ ճառերից հետո տիրեց ընդհանուր հուսահատություն, քանի որ «բոլոր թուրքերեն երգերի ոգին ու ծափերի նյութը «սուլթան Համիդը» և «փադիշահ»-ն էր, իսկ բոլոր ճառերի և ատենաբանությունների միտքն ու իմաստը Երամյան Համբարձումի կենսագրությունն ու դպրոցի նյութական պարտքը շեշտելն էր: Հին ռեժիմը ամբողջապես կը թագավորեր հոն, սուլթան Համիդն էր ոգևորության առարկան. ներկա եղողներ իրավունք կունենային կասկածելու սահմանադրության և ազատության իրականության մասին»[29]:

---

[26] *«Հորիզոն», 23. VIII. 1909:*

[27] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 177-178:*

[28] *«Գործ», 14. IX.1908:*

[29] *Նույն տեղում:*

Ընդհանուր առմամբ ներկայացնելով Վանում տիրող «հեղափոխական» խանդավառ իրավիճակը՝ «Մշակ» թերթը նշում է. «Վերջապես. վերջապես ազատ ենք: Ամեն օր հանդես, խրախճանք, տոն, ոգևորություն:

Թուրք և հայ հեղափոխականներ ազատ կը պտտին, կը ճառախոսեն, զինվորականներու հետ կեղբայրանան, և մինչև հիմա հալածված ժողովր դի ներկայացուցիչները ասպարեզին տերն են: Զինվորական մյուզիկ զիրենք կառաջնորդե: Հայ և թուրք նահատակներու համար մեծ թափոր և հոգեհանգիստ կատարեցինք. սահմանադրության շքեղ հանդես՝ Երամյան վարժարանի մեջ. Վան պաշարող զորքեր հանդեսով, ծաղիկներով, խնձորներով, օշարակով և երգերով ճամբու դրինք. հեղափոխական գործիչներ ազատորեն ժողովրդի խանդավառության մեջ ծափերով, երգերով կընդունվին, հայ և թուրք եղբայրակցության մեծ համագումարներ տեղի կունենան և ազդու ճառեր կը խոսին թուրք և հայ հեղափոխականներ: Ամեն բերան՝ երգ ունի, ամեն ձեռք՝ ծափ, ամեն երես՝ ժպիտ: Վատ, ստոր տարրեր անհետացած են, կորսված. իրենց մռնչյունն ու ատամներու կրճտյունը կը մարի համաժողովրդական աղաղակին մեջ: Ազատության հաղթական ռազմերգը կը խլացնե բոլոր կաղկանձյունները ու սիրո, սրտազեղության, ճնշված տարրերու խանդավառության մրրիկը իր մեջ կը զանգե բոլոր մասսաներ»[30]*:*

Այս ամենից դժգոհ էին միայն քուրդ ավատատեր-աշիրեթապետերը, որոնք մտավախություն ունեին, որ սահմանադրության գործադրությամբ իրենք զրկվելու էին ավատական և ավազակային առանձնաշնորհներից:

Սակայն իրականում սուլթանական վարչակարգը արագությամբ չէր փոփոխվում: Դեռ ավելին, այն, կարծես թե, ընդհանրապես չէր փոփոխվում, քանի որ դրա պաշտպանները դեռևս անթիվ էին, իսկ հին պաշտոնյաները նախկինի պես շարունակում էին իրենց պաշտոնավարումը: Այդ ամենը աչքակապություն էր: Հարկավոր էր մտքերի հեղաշրջում, որն իսպառ բացակայում էր Օսմանյան Թուրքիայում:

... Ուրախ, երջանիկ, բայց և դյուրահավատ հայ ժողովուրդը թե՛ Վանում, թե՛ շրջաններում տեսնելով բռնապետական վարչաձևի ու նրա հետևանք հանդիսացող քմահաճ և թշնամական վերաբերմունքի անհետացումը, հույս ուներ դրանից հետո թուրքի հետ բարեկամ ու հարազատ մնալու և օսմանյան նոր հայրենիքի համար հավատարիմ ու օրինապահ քաղաքացի դառնալու: «Շա՛տ, չափազանց շա՛տ ափսոս, որ այդ բոլոր հույսերը գեղեցիկ ու քաղցր երազներ էին միայն,– իր հուշերում գրում է ականատեսը և շարունակում.– Հայասպան Սուլթան Համիդի պատմուճանը լիովին ժառանգություն էր հասել երկրի նոր տերերին՝ Համիդյան հայահալած և հայաջինջ քաղաքականության հարազատ ժառանգորդներ հանդիսացող թալեաթ-էնվերներին»[31]*:*

---

[30] *«Մշակ» (Թիֆլիս), 28. IX. 1908:*

[31] *Ս. Ս ա ր հ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 32:*

ОТКЛИКИ МЛАДОТУРЕЦКОГО ПЕРЕВОРОТА В ВАНСКОЙ ГУБЕРНИИ (Июль–август 1908 г.)

АВЕТИС АРУТЮНЯН

Р е з ю м е

Младотурецкий переворот в 1908 г. с воодушевлением был воспринят турецким и армянским населением как в отдельных регионах Турции, так и в Ване. С июля 1908 г. в Ване начался период демонстраций и митингов, в результате чего вышли на свободу политзаключенные. 17 августа 1908 г. в церкви района Вана Арарк, при согласии политических партий, состоялась панихида по страдальцам, павшим за свободу страны. 23 августа был отрешен от должности сторонник султанского строя наместник Вана Али Риза. Вместо него избирается совет из семи человек, состоявший из армян и турок.

THE ECHOES OF YOUNG TURKS UPHEAVAL IN THE PROVINCE OF VAN (July–August, 1908)

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

Young Turks' upheaval in 1908 was accepted with inspiration by Turkish and Armenian population both in separate regions of Turkey and in Van. From July of 1908 the period of demonstrations and meetings began in Van, as a result of which political prisoners were set free. On the 17th of April, 1908 with consent of political parties funeral rites for sufferers, fallen for their country, took place in the church of Arark, in the region of Van. On August 23 Ali Riza, supporter of sultan service and vicegerent, was suspended. Instead of him a council of seven members, consisting of Armenians and Turks, was elected.